ՄԱԽԼՈՒՏՈ. ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆ. ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ, *Հայաստանի պատմության թանգարան, Երևան, 2021, 264 էջ*:*

Բանալի բառեր՝ Սմբատ Բորոյան, Մախլուտո, հուշեր, հուշագրություն, «Յուշիկք հայրենեաց», ազատագրական շարժում, Անդրանիկ, Տարոն, Հայաստան, Ֆիդայի:

Հուշագրությունը գեղարվեստավավերագրական գրականության արժեքավոր ժանրերից է: Տարբեր ժամանակներ կյանքի տարբեր ոլորտների հայ և օտարազգի ներկայացուցիչներ դիմել են այս ժանրին: Հուշերը թղթին հանձնած երևելիներից է հայ ազատամարտի կարկառուն դեմքերից մեկը՝ Սմբատ Բորոյանը (Մախլուտո), ում «Յուշիկք հայրենեաց» գիրք-հուշագրությունը լույս ընծայվեց Երևանում 2021-ին. գիրքը հրատարակել է Հայաստանի պատմության թանգարանը, ձեռագիրը տպագրության են պատրաստել Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն պատմության բաժնի վարիչ Սեդա Գալստյանը (նախաբանի հեղինակ) ու ավագ գիտաշխատող Տիգրան Ղանալանյանը (ծանոթագրությունների հեղինակ): Սմբատ զորավարի ընկերը՝ Մկրտիչ Երիցյանցը, դեռևս 1936 թ. Փարիզում հրատարակել էր զորավարի հուշերը, բայց այն ամբողջական չէր:

Այս հրատարակությամբ ընթերցողին է ներկայացվում մոտ յոթ տասնամյակ Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդերում պահվող և գիտական ուսումնասիրության արժանի մի փաստաթուղթ, որի հիմքում ընկած է մինչ օրս մորմոքող Հայկական հարցը: Հիշյալ փաստաթուղթն ազգային-ազատագրական շարժման գործիչ, մարտերում հերոսացած ֆիդայի, ՀՅԴ անդամ Ս. Բորոյանի (Մախլուտո) հուշագրությունն է՝ նրա արխիվից, որը թանգարանին է նվիրել ՀՍՍՀ-ի արդարադատության մինիստրության Երևանի առաջին պետական նոտարական գրասենյակի նոտար Սաղաթելյանը 1956 թ. մարտի 21-ին:

Արխիվը հարուստ է զորավար Սմբատի կյանքին ու գործունեությանը վերաբերող արժեքավոր նյութերով, որոնցում ուրույն տեղ ունեն Ս. Բորոյանի՝ 612–617 համարների տակ պահվող ձեռագիր հուշերը՝ «Յուշիկք հայրենեաց» վերնագրով (6 տետր): Սմբատ զորավարը պայմանական բաժանումներ է կատարել իր հուշագրությունում՝ «Ա. Պատմական Հայաստանը քաղաքականապես», «Բ. Մեր հեղափոխությունը, իմ կյանքս, մասնակցությունս ու տեսածներս», «Գ. Տարոնի աշխարհը և Տարոնացին՝ իր քաղաքական և

---

* *Ներկայացվել է 06. VI. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. VI. 2022 թ.:*

գրական արժեքներով, բարքերով ու սովորություններով»: Վերջում ավելացրել է հավելված՝ «Արտասահմանի կյանքս և տպավորություններս, Մարսել (Ֆրանսիա), 1941»: Բ գլխում ևս կա հավելված, որտեղ պատմում է Զեյթունի և Սասունի ապստամբությունների, Բանկ Օթոմանի գրավման, Խանասորի արշավանքի, Առաքելոց վանքի կռվի մասին:

Սմբատի հուշերում անչափ կարևոր տեղեկություններ կան կամավորական շարժման, առանձին ջոկատների պատմության, կուսակցությունների գործունեության վերաբերյալ, լուսաբանվում են նաև առանձին հերոսական դրվագներ՝ կապված Անդրանիկի հետ՝ Դիլմանում, Վանում, ապա Ջուլֆայի ճանապարհին և այլն: Հուշագրության 4-րդ տետրում հեղինակն արժեքավոր տվյալներ է հաղորդում Կարսի անկման մասին: Հուշերի գրքում տեղ են գտել նաև Անդրանիկի և Արամ Մանուկյանի միջև ծագած հակասությունների (1917 թ. մայիսին՝ Արևմտահայերի համագումարից հետո) ու դրանց հաջորդող դեպքերի մասին պատմող դրվագները: Հուշագրության մեջ կարևոր տեղեկություններ կան Կոմս գյուղի, Գելիեգուզանի, Կոփի, Մերկերի, Միրագոմի, Առաքելոց վանքի կռվի, Շենիկի, զոհված ֆիդայիների, հայ-թուրքական, հայ-պարսկական հարաբերությունների մասին: Անդրանիկի, Սմբատի մասնավոր հանդիպումները պարսիկ Իզո խանի, Շերիֆ բեյի, Յազեր փաշայի հետ խոսուն վկայություններ են առ այն, թե հաճախ ինչ գնահատանքի ու հարգանքի են արժանացել մեր քաջորդիները իրենց հակառակորդների կողմից: Կարևոր տեղեկություն կա Անդրանիկի կյանքի վերջին օրերի մասին Զիկոյում, ուր նա գնացել էր բուժման նպատակով: Հուշերում անդրադարձ կա նաև Գարեգին Նժդեհին և Ռուբեն Տեր-Մինասյանին: Առանձին բաժնում հեղինակը էջեր է նվիրել մինչ այդ գրեթե չհիշատակված կամ անհայտ հերոսների:

Զորավարի այս գրվածքը միայն հերոսական դրվագների գիրք չէ, այն նաև ցույց է տալիս հերոսների միջև եղած հակասությունները, գաղափար տալիս այն մասին, թե ինչ արժեքներով ենք ապրել տվյալ ժամանակահատվածում:

Հուշագրության մեջ կարևոր ենք համարում հատկապես Տարոն աշխարհի մանրամասն նկարագրությունը: Այն իմացաբանական և ճանաչողական նշանակություն ունի յուրաքանչյուր հայի, հատկապես՝ պատմաբանների և աշխարհագրագետների համար: Տարոնը Սմբատ զորավարի ծննդավայրն է, իբրև «Մամիկոնյան սերնդի վերջին շառավիղ զավակ» զորավարը մանրամասն ներկայացնում է տեղանքը՝ իր պատմական արժեքներով, «ազգային և ցեղային շահերով»: Հատ-հատ նկարագրում է Տարոնի գյուղերը՝ իրենց հերոսներով: Շրջում է Մուշի եկեղեցիներով ու Սուրբ Մարիայի թաղերով, համանուն եկեղեցիով, դպրոցով և առաջնորդարանով: Այս վերջին թաղն է եղել բոլոր պաշտոնական և ազգային գործերի կենտրոնատեղին, այստեղի ծնունդ է եղել նաև սույն հուշապատման հեղինակը: Ֆիդայապետի հուշագրության շնորհիվ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Մուշի նշանավոր ընտանիքների ու գերդաստանների վերաբերյալ: «Յուշիկք հայրենեաց»-ը մեծարժեք տեղեկություններ է պարունակում նաև Տարոն գավառի պատմական հուշարձանների մասին՝ հավելելով նաև տեղի վանքերում, եկեղեցիներում անցկացվող տոները, ծիսակատարությունները, ավանդական սովորույթները՝ պսակադրություն, հարսի քողածածկ հագուստ և այլն: Ուշագրավ են նաև տեղեկությունները տարբեր նահանգների հայ բնակչության վերաբերյալ, որոնք

հեղինակը համեմատել է Ազգային առաջնորդարանի կատարած վիճակագրության հետ: Ուշադրության է արժանի Սմբատի՝ Մուշ անվան ծագումնաբանության տարբերակը և Տարոն բառի ստուգաբանությունը: Հեղինակը հուզառատ բանաստեղծություն է նվիրել Խաչիկ Դաշտենցին և նրա գերդաստանին:

Ազգին առնչվող ամենատարբեր խնդիրների ու իրողությունների անդրադառնալով հանդերձ՝ հայդուկապետը, սակայն, շատ զուսպ է իր, իր քաջագործությունների մասին խոսելու, պատմելու հարցում. հաճախ միայն ակնարկներ է անում:

Խնդրո առարկա գիրքը սոսկ հուշագրություն չէ, այստեղ անդրադարձ կա մեր բազմահազարամյա պատմության քաղաքական, ռազմական, հոգևոր կարևոր անցքերին, դեմքերին ու դեպքերին, մեր հայրենիքի նվիրական վայրերին: Հեղինակը որոշակի վերլուծական աշխատանք է կատարել, տվել գնահատականներ. մենք տեսնում ենք մտածող, խորհող, վերլուծող անհատի, ոչ թե լոկ հուշերը գրի առնողի: Սմբատ զորավարի այս գիրքն ունի նաև աղբյուրագիտական արժեք: Անձնվեր գործչի հուշերը լույս են սփռում XIX դ. վերջի և XX դ. առաջին կեսի հայոց պատմության մի շարք կարևոր հարցերի վրա: Այն սկզբնաղբյուր է ֆիդայական շարժման, հայ-թաթարական ընդհարումների, պարսկական հեղափոխությանը հայերի մասնակցության, Առաջին աշխարհամարտի ու կամավորական շարժման, 1920 թ. Թուրք-հայկական պատերազմի, Փետրվարյան ապստամբության, Սիյուռքի հասարակական-քաղաքական, ինչպես նաև Տարոնի պատմության ուսումնասիրության համար:

«Յուշիկք հայրենեաց»-ն ականատեսի վկայություններն են՝ հայոց երկարամյա ազատամարտի մի փուլի:

ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ

Բ. գ. թ.: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, արևմտահայերեն, հայոց լեզվի պատմություն, տերմինաբանություն: Հեղինակ է տասնյակ հոդվածների ու ակնարկների: hrachyab@gmail.com